

Թեթեւ ազգասէրներ, մեր պատասխանին մէջ նախ եւ յառաջ ինամով ցոյց պիտի տանք անոնց՝ մեր աւագորերոյն յղիացեալ կենցաղը: Եւ երբ հարցնեն՝ թէ մեր ինն հարիւր նախարարական տոհմերն ի՞նչպէս սպառեցան բոլորովին, առանց ընծիւղ մ'անգամ թողու իրենց արմատէն, մեք դարձեալ մեր մատը պիտի ուղղենք անոնց տաճարներուն եւ ըսենք. Հող, այդ թաքթաքուր փլատակաց ներքեւ, ծիւրած ախտէն, եւ հարուածեալ վրէժխնդիր անծանօթ Չեռքէն, թաղուած կը մնան անոնք՝ իրենց սուրբ սկոռդաց ու քակուկաց, իրենց գոշասնաց եւ վարձակաց հետ. սարսափը թառած է անոնց ուրուականաց վրայ, եւ ո՛չ ոք կը յանդգնի մօտենալ անոնց (Փաւս. 48): Այսպէս շիջան նաեւ Բաբելոն ու Նինուէ, այսպէս նուաղեցան Հռովմ եւ Բիւզանդիոն ալ: